

2008


Հայաստանի Գործարար և Ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» համազգային նախագիծ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հայաստանը պետք է դառնա գործարար և ներդրումային միջավայրի «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»՝ տարածաշրջանում լավագույն վայրը ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու, բիզնես սկսելու ու զարգացնելու համար

Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարություն

2008



Բովանդակություն

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	3
<i>Հայաստանը Համաշխարհային Բանկի «ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ» 2008թ. զեկույցում</i>	3
Հայաստանում ներդրումների արդի վիճակը	4
Մարտահրավերներ.....	4
Ռազմավարություն.....	5
Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ղ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Բ	6
1. Ընկերության հիմնադրում	6
1.1 Հենանհիշերը/թվային թիրախները	6
1.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	6
2. Լիցենզավորում (ճարտարապետաշինարարական փաստաթղթավորում).....	7
2.1 Հենանհիշերը/թվային թիրախները	7
2.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	7
3. Աշխատանքային հարաբերությունների կարգավորումը	8
3.1 Հենանհիշերը/թվային թիրախները	8
3.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	8
4. Սեփականության գրանցում	9
4.1 Հենանհիշերը/թվային թիրախները	9
4.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	9
5. Վարկեր ստանալը	9
5.1 Հենանհիշերը/թվային թիրախները	10
5.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	10
6. Ներդրողների պաշտպանություն	10
6.1 Հենանհիշերը/թվային թիրախները	11
6.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	11
7. Հարկերի վճարում	12
7.1 Հենանհիշերը/թվային թիրախները	12
7.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	13
8. Միջազգային առևտուր	13
8.1 Հենանհիշերը/թվային թիրախները.....	13
8.2 Մարտավարությունը և ժամանակացույցը	14
9. Պայմանագրերի կիրարկումը	14
9.1 Հենանհիշերը/թվային թիրախները.....	15
9.2 Մարտավարությունը և ժամանակացույցը	15
10. Կազմակերպության լուծարում	15
10.1 Հենանհիշերը/թվային թիրախները	16
10.2 Մարտավարությունը և ժամանակացույցը.....	16
Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Վ Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Բ Ը	16
Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն Ռ Ի Ս Կ Ե Բ Ը	17
Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Ս Ա Մ Ն Ա Կ Ի Ց Ն Ե Բ Ը	17
Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Ա Ր Գ Յ Ո Ւ Ն Զ Ն Ե Բ Ի Զ Ա Փ Ե Լ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը	17
Ծ Ա Խ Ս / Ե Կ Ա Մ ՈՒ Տ Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	18
Ն Ա Խ Ա Գ Ծ Ի Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն Ժ Ա Մ Կ Ե Տ Ն Ե Բ Ը	19

Տ Ե Ս Լ Ա Կ Ա Ն

Հայաստանը պետք է դառնա գործարար և ներդրումային միջավայրի «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»՝ տարածաշրջանում լավագույն վայրը ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու, բիզնես սկսելու ու զարգացնելու համար:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով ու դրա կատարումն ապահովող 2008-2012թթ. միջոցառումների ցանկով, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով ընդգծվել է գործարար միջավայրի հրատապ բարելավման անհրաժեշտությունը, որի համար անհրաժեշտ է իրականացնել հավակնոտ բարեփոխումներ:

Վերջին 3 տարիների ընթացքում բարեփոխումներ իրականացրած երկրներում բարեփոխումների մոտ 85%-ը իրականացվել է նոր ձևավորված կառավարությունների գործունեության առաջին 15 ամիսների ընթացքում: Հաջողություններ գրանցած նոր Կառավարություններն իրենց գործունեության առաջին փուլի բարեփոխումները իրականացրել են միաժամանակ մի քանի ուղղություններով:

Այդ փուլում կառավարության կողմից իրականացված բարեփոխումների դրական արդյունքները տեսանելի են դառնում հասարակությանը, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի, առողջապահական և կրթական խնդիրների բարելավման ուղղությամբ, ինչի արդյունքում աճում է հետագա բարեփոխումների հանդեպ Հասարակության պահանջը:

Հայեցակարգում ներկայացվում են հստակ առաջարկություններ այնպիսի բարեփոխումների ուղղությամբ, որոնք հնարավոր է իրականացնել կարճաժամկետ հեռանկարում՝ մեկ ու կես տարվա ընթացքում: Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է առկա մարտահրավերը և ունի կամք ու հնարավորություն արագ իրականացնելու առաջարկվող բարեփոխումները:

Սույն հայեցակարգը մշակվել է հաշվի առնելով Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» ծրագրի աշխատանքային խմբի կողմից առաջարկվող արագ բարեփոխումներ իրականացնելու ստորև ներկայացվող մոտեցումները, որոնք վերաբերվում են «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման 10 ցուցանիշներից յուրաքանչյուրին:

- Մկսել պարզից՝ այն վարչարարական բարեփոխումներից, որոնք չեն պահանջում օրենսդրական փոփոխություններ:
- Կրճատել վարչական ընթացակարգերը՝ նվազագույնի հասցնելով գործարար-պետական պաշտոնյա շփումները:
- Ներդնել ստանդարտ դիմումի ձևեր և ապահովել օրենսդրական կարգավորման վերաբերյալ իրազեկվածությունը:
- Բարելավել օրենսդրական դաշտի կիրարկման վարչարարությունը:


Հայաստանը Համաշխարհային Բանկի «ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ» 2008թ. զեկույցում

Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգումը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման աստիճանի և տնտեսական աճի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային

համեմատություններ հետագուտված 178 երկրների միջև:

Այս զեկույցում 178 երկրների շարքում Հայաստանը 2008 թ.-ին զբաղեցրել է 39-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարձրացնելով իր վարկանիշը 46-ից:

Հայաստանի զբաղեցրած դիրքը «Գործարարությանը զբաղվելը» 2008թ. դասակարգման մեջ մի քանի այլ երկրների համեմատությամբ



Հայաստանում ներդրումների արդի վիճակը

- 1991-2007թթ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների ընդհանուր գումարային ծավալը կազմել է 3.5 մլրդ ԱՄՆ դոլար, որից՝ 2000-2007թթ. ավելի քան 2.9 մլրդ ԱՄՆ դոլար:
- 2007թ. տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը կազմել է 845.4 մլն ԱՄՆ դոլար (աճը 34.6 % 2006թ.-ի հետ համեմատությամբ):
- 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գումարային ՕՈՆ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 27.2 %:
- 2008թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հիմնադրվել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 3698 ընկերություն:

Մարտահրավերներ

Հայաստանը պետք է դառնա տարածաշրջանի գործարար և ներդրումային միջավայրի «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»: Հայաստանում բիզնես ունենալը պետք է լինի շահավետ, իսկ գործունեություն ծավալելու պայմանները գրավիչ, ինչը մասնավորապես կնպաստի ագրեսիվորեն աճող ՓՄՁ կայացմանը և հարևան ու զարգացած երկրների շուկաներ ներխուժմանը:

Հետևյալ մարտահրավերները կոչված են Հայաստանում ստեղծելու ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանը օժանդակող զարգացած շուկայական և ֆիզիկական ենթակառուցվածքներ, տնտեսության կարիքները բավարարող կրթական համակարգ.

- գործարար և ներդրումային միջավայրի բարելավում և զարգացում
- տնտեսության ազատականացում
- ազատ մրցակցության խթանում

- վարչարարական ընթացակարգերի պարզեցում
- հարկային և մաքսային՝ ֆիսկալ հավասարակշռված քաղաքականության իրականացում
- միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագետների պատրաստում
- հանրային կրթական ծրագրերի իրականացում և իրազեկման աստիճանի բարձրացում ուղղված սպառողների պաշտպանության մշակույթի ձևավորմանը:

Ռազմավարություն

I. Բարենպաստ գործարար միջավայրի ձևավորում.

- գործարարությունը կարգավորող օրենսդրական դաշտի կայունության, կանխատեսելիության և պարզության ապահովում
- ներդրումների լիարժեք պաշտպանության երաշխավորում
- գործարար գործունեություն իրականացնելու համար պետական կարգավորումների պարզեցում
- գործարարության պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների, սխեմաների և ինստիտուցիոնալ կառույցների մշակում
- նոու-հաուսների, կառավարման հմտությունների և նորարարությունների ներգրավում
- մրցակցության ամրապնդում միջազգային շուկաներում
- մասնավոր հատված-պետություն փոխշահավետ համագործակցության ապահովում
- մասնավոր սեփականության պատշաճ իրավական պաշտպանություն
- գործարարությանը խթանող ենթակառույցների արդյունավետության ապահովում

II. Տեղեկատվական հասարակության և էլ-կառավարության համակարգի ձևավորում

- պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական բազաների թվայնացում և համադրելիության ապահովում՝ պետական ռեգիստրների ձևավորում
- պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների էլեկտրոնայնացում
- էլ-գրագիտության և հասարակական իրազեկվածության մակարդակի բարձրացում
- ՏՏ ժամանակակից գործիքների, լուծումներ և ծառայությունների հասանելիության ապահովում
- հեռահաղորդակցության միջոցների համատարած հասանելիություն՝ ֆիզիկական, ֆինանսական, որոկական և բովանդակային

III. Մտավոր սեփականության պաշտպանության ապահովում

- մտավոր սեփականության պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրության լիարժեք կիրարկման մեխանիզմների ապահովում
- մտավոր սեփականության հանդեպ Հայաստանում գրանցվող հեղինակային իրավունքների և այլ հարակից իրավունքների միջազգային ճանաչման ապահովում

IV. Սփյուռքի տնտեսական դերի կայացում և ամրացում.

- սփյուռքի նկատմամբ վարվող քաղաքականության նպատակաուղղվածության ապահովում
- սփյուռքի հնարավորությունների և կարողությունների մասնակցության ապահովում տնտեսության զարգացման գործում
- երկուստեք վստահելի և շահավետ համագործակցության հիմնում
- սփյուռքահայ ներդրողի ամբողջական խթանում:

1. Ընկերության հիմնադրում

Ընկերության հիմնադրման ցուցանիշը ներառում է ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար գործարարների կողմից իրականացման ենթակա քայլերի քանակը, դրանց միջին տևողությունը, պահանջվող ծախսերը և պահանջվող նվազագույն կապիտալի տոկոսային հարաբերակցությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հետ:

1.1 Հենանիշերը/թվային թիրախները

«Doing Business»-ը հաշվարկում է նոր գործ սկսելու և պաշտոնապես գործարկելու համար ձեռնարկատիրոջից պաշտոնապես պահանջվող ընթացակարգերը, ծախսը և ժամանակը: Հայաստանում ընկերություն հիմնադրելու համար միջինում պահանջվում է իրականացնել 9 ընթացակարգ, որը տևում է 18 օր և պահանջվում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 4.8% ծախս: Ի լրումն, նվազագույն կապիտալի պահանջը կազմում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 3.1%: Համաշխարհային մակարդակով այս ցուցանիշով Հայաստանը դասակարգվում է 47-րդ տեղում:

Ցուցանիշ ¹	Հայաստան	Ավստրալիա	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	47	1	20	10			3
Ընթացակարգեր (քանակ)	9	2	5	5	8.8	6.0	2
Տևողությունը (օրեր)	18	2	7	11	26.1	14.9	3
Ծախսը (% ՀՆԱ մեկ շնչի հաշվով)	4.8	0.8	2	9.5	11.1	5.1	2.0
Վճարվող նվազագույն կապիտալը (% ՀՆԱ մեկ շնչի հաշվով)	3.1	0.0	28.1	0	45.3	32.5	0.0

1.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Միասնական տեխնոլոգիական հենքով առցանց (էլեկտրոնային եղանակով) գրանցման և հաշվառման համադրելի համակարգերի՝ վարչական տեղեկատվական ռեգիստրների ձևավորում (ժամկետ 01.01.2010թ.)
- «Բիզնեսի աջակցման կենտրոնների» հիմնում, որը տնտեսվարող սուբյեկտներին «մեկ պատուհանի, մեկ կանգառի» /one stop shop/ սկզբունքով կմատուցի հանրային ծառայություններ՝ ընկերություն հիմնադրելու ողջ գործընթացի, ինչպես նաև այլ վարչական ռեգիստրների, մասնավորապես՝ կոմունալ ծառայությունների միացումների վերաբերյալ և այլն (ժամկետ 01.07.2009թ.)
- Նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջի, այդ թվում՝ դրա առկայության (փաստաթղթային ապացուցման) պահանջի վերացում, բացառությամբ ֆինանսական միջնորդությամբ զբաղվելու նպատակով ստեղծվող իրավաբանական անձանց (ժամկետ 01.01.2009թ.)
- Գրանցման ժամանակ իրավաբանական անձի կանոնադրություն ներկայացնելու պարտադիր պահանջի վերացում, բացառությամբ ֆինանսական միջնորդությամբ զբաղվելու նպատակով ստեղծվող իրավաբանական անձանց (ժամկետ 01.01.2009թ.)

¹ Բոլոր 10 ցուցանիշների հաշվարկման համար գործում է «Doing Business» դասակարգման մեթոդաբանությունը առանց հաշվի առնելու մնացած երկրների կողմից հնարավոր բարեփոխումների իրականացումը:

- Կնիք ունենալու պարտադիր պահանջի վերացում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Իրավաբանական անձի կողմից կնիք ունենալու ցանկության դեպքում դրա ստանալու թույլտվության պահանջի վերացում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Անհատ ձեռնարկատերերի գրանցման պահանջի վերացում՝ դրա փոխարեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել ցանկացող ֆիզիկական անձանց տրամադրելով ՀՎՀՀ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան (*ժամկետ 01.01.2009թ.*):

2. Լիցենզավորում (ճարտարապետաշինարարական փաստաթղթավորում)

Լիցենզավորման (շինարարական թույլտվությունների) ցուցանիշը ներկայացնում է շինարարության համար պահանջվող ընթացակարգերը, ժամանակը ու ծախսերը, ներառյալ՝ անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների ստացումը, պահանջվող ծանուցումների և վերահսկողությունների կատարումը և կոմունալ ծառայությունների միացումները:

2.1 Հենանհիշերը/թվային թիրախները

Լիցենզավորման (շինարարական թույլտվությունների) գործառույթները բաղկացած են եղել 19 ընթացակարգերից, տևել են միջինը 116 օր և արժեցել են 3.3 միլիոն դրամ կամ մեկ շնչի հաշվով՝ ՀՆԱ 411%-ը: Շինարարական թույլտվությունների ստացման դյուրիմության առումով Հայաստանը գրավում է 73-րդ տեղը:

Էստոնիայում լիցենզավորման ստացման ծախսը գործարարների համար 15 անգամ ցածր է Հայաստանի հետ համեմատած:

Ցուցանիշ	Հայաստան	Նոր Զելանդիա	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010*
2008թ. վարկանիշը	73	2	14	11			7
Ընթացակարգեր (քանակ)	19	7	13	12	24.0	14.0	9
Տևողությունը (օրեր)	116	65	117	113	251.3	153.3	110
Ծախսը (% ՀՆԱ մեկ շնչի հաշվով)	411.3	25	28.1	28.9	628.4	62.2	30

2.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Բոլոր շինարարական թույլտվությունների տրամադրման կենտրոնացում մեկ մարմնում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Ծառայությունների մատուցում համայնքային կենտրոններում ստեղծված «մեկ կանգառի կետի» միջոցով, այդ թվում՝ կոմունալ ծառայությունների միացումների (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Ամեն թույլտվության տրամադրման համար օրենքով վերջնաժամկետի սահմանում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Սահմանված թույլտվությունների և հաստատումների կրճատում կամ միավորում մեկ ընթացակարգի մեջ (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Գործընթացի և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարձրացում, դրանց պարզ նկարագրություն (*ժամկետ 01.10.2008թ.*)

3. Աշխատանքային հարաբերությունների կարգավորումը

Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ցուցանիշը ներկայացնում է այն բարդությունները, որոնց հանդիպում են գործատուները աշխատողներ ընդունելու և ազատելու ժամանակ:²

3.1 Հենանհիշերը/թվային թիրախները

Հայաստանում աշխատանքի ընդունման բարդության ցուցիչը 33 է, ժամաքանակի խստության ցուցիչը՝ 40, աշխատանքից ազատման բարդության ցուցիչը՝ 20 է: Աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման դյուրինության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 48-րդ տեղը աշխարհում: 75 երկիր չի կանոնակարգում գիշերային աշխատանքը և ոչ էլ պարտադրում հատուկ ոչ աշխատանքային օրեր: Երկրները պայքարում են պահպանելու համար իրավունքների հավասարակշռությունը աշխատանքի շուկայի ճկունության և աշխատանքի կայունության միջև և շատ երկրներ սխալվել են կիրառելով ավելորդ կանոնակարգեր՝ այսպիսով վնաս հասցնելով թե գործարարությանը, թե աշխատողներին: Բարեփոխումները պետք է կենտրոնանան աշխատանքի շուկան առավելագույնս ազատականացնելու և աշխատատեղերը տնտեսության սովերային հատվածից ֆորմալ հատված տեղափոխելը խրախուսելու վրա:

Ցուցանիշ	Հայաստան	Սինգապուր	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	48	1	156	4			7*
Աշխատանքի ընդունելու ցուցիչ	33	0	33	0	36.3	25.2	0
Աշխատանքի ժամերի կոշտության ցուցիչ	40	0	80	20	51.4	39.2	20
Աշխատանքից ազատելու բարդության ցուցիչ	20	0	60	0	32.1	27.9	0
Աշխատանքից ազատելու արժեքը (աշխատավարձ/շաբաթ)	13	4	35	4	26.1	25.7	4.3

3.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Աշխատանքային պայմանագրերի կնքման և ժամկետային սահմանափակումների պարտադիր պահանջի վերացում և իրավաբանական անձանց կողմից աշխատանքային հարաբերությունների կանոնակարգերի ինստիտուտի հստակեցում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Աշխատանքից ազատման ճկունության բարձրացում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Աշխատանքից ազատման պարտադիր նախազգուշացման համար սահմանված ժամկետի և փոխհատուցման գումարի չափի կրճատում (*ժամկետ 01.07.2009թ.*)

² Ցուցիչներից յուրաքանչյուրը որոշում են 0-ից մինչև 100-ի միջև տրված արժեքներով, ավելի բարձր արժեքները նշանակում են ավելի խիստ (ոչ ճկուն) կարգավորումներ: Աշխատանքի ընդունման խստության ցուցիչը երեք ենթացուցիչների միջինն է ներկայացնում:

- Աշխատանքային ժամերի սահմանափակումների կամ արտաժամյա աշխատանքի վարձատրության չափի նվազեցում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Գիշերային աշխատանքի և շաբաթ ու կիրակի օրերը աշխատելու նկատմամբ սահմանափակումների նվազեցում (*ժամկետ 01.07.2009թ.*):

4. Սեփականության գրանցում

Սեփականության գրանցման ցուցանիշը ներկայացնում է կազմակերպությունների սեփականության իրավունքի ձեռք բերման դյուրինությունը, ներառված են ընթացակարգերի քանակը, ժամկետը և սեփականության գրանցման ընթացքում ծախսերը:

4.1 Հենանհիշերը/թվային թիրախները

Թեև, Հայաստանը աշխարհում զբաղեցնում է 2-րդ տեղը այս ցուցանիշով, այնուամենայնիվ այն կարող է շահել հետագա բարեփոխումների իրականացումից: Էլեկտրոնային ընթացակարգերի և տեղեկատվության որոնման համակարգի ներդրումը թույլ կտա էլ ավելի բարձրացնել Հայաստանի դիրքը, դարձնելով այն աշխարհում սեփականության իրավունքի փոխանցման բնագավառում ամենաարդյունավետ ընթացակարգեր ունեցող երկրներից մեկը:

Ցուցանիշ	Հայաստան	Նոր Զելանդիա	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	2	1	21	11			2
Ընթացակարգեր (քանակ)	3	2	3	5	6.2	4.9	2
Տևողությունը (օրեր)	4	2	51	5	92.4	28.0	2
Ծախս (սեփականության արժեքի %)	0.4	0.1	0.5	0.1	2.4	4.6	0.3

4.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Անշարժ գույքի կադաստրում գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման ընթացակարգերի առցանց (էլեկտրոնային եղանակով) իրականացման հնարավորության ստեղծում (*ժամկետ 01.01.2010թ.*)
- Անշարժ գույքի վարձակալության սահմանված ընթացակարգերի պարզեցում:

5. Վարկեր ստանալը

Վարկեր ստանալու ցուցանիշը ներկայացնում է վարկային տեղեկատվության տրամադրման միջոցները և վարկառու ու վարկատուի իրավական իրավունքները:³

³ Իրավական իրավունքի ցուցիչը տատանվում է 0-10, ավելի բարձր միավորները նշանակում են, որ այդ օրենքներն ավելի լավ են ծրագրված՝ ընդլայնելու վարկի ձեռքբերման հասանելիությունը: Վարկային տեղեկատվության ցուցիչը հաշվում է գործունեության շրջանակը, հասանելիությունը և վարկային տեղեկատվության որակը, որը հասու է պետական ռեգիստրի և մասնավոր բյուրոների միջոցով: Այն տատանվում է 0-6, ավելի բարձր միավորները

5.1 Հենանիշերը/թվային թիրախները

Հայաստանի չափահաս բնակչության 13.5%-ն է ընդգրկված մասնավոր վարկային գրասենյակում/բյուրոյում և 2.8%-ը հանրային վարկային ռեզիստրում, մինչդեռ Մեծ Բրիտանիայում այդ թիվը կազմում է բնակչության մոտ 85%-ը: Հայաստանը վարկերի ստացման դյուրինության առումով դասակարգվում է 36-րդ տեղում: Դասակարգումը կբարելավվի, եթե վարկային կազմակերպությունների (ներառյալ՝ կոմունալ ձեռնարկությունները) անդամակցությունը վարկային գրասենյակին (բյուրո) դարձնել պարտադիր, որը թույլ կտա բանկային փոխառություն կամ վարկային քարտ չունեցող անձանց համար ստեղծել վարկային պատմություն: Այսպիսի բարեփոխումը կընդլայնի գրասենյակի գործունեության շրջանակը, և կդյուրացնի ձեռներեցների համար բիզնես հիմնելու և զարգացնելու համար անհրաժեշտ միջոցների հայթայթումը:

Չնայած անցած տարվա բարեփոխումներին, Հայաստանում օրենքը իրականացվում է 14 տոկոսով, մինչդեռ Միացյալ Թագավորությունում 85 տոկոսով:

Ցուցանիշ	Հայաստան	Մեծ Բրիտանիա	Էստոնիա	Վրաստան	Տարածա շրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը Իրավական իրավունքի ցուցիչ	36	1	48	48			13
Վարկային տեղեկատվության ցուցիչ	5	10	4	5	5.6	6.4	7
Վարկային տեղեկատվության ցուցիչ	5	6	5	4	3.4	4.8	6

5.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Վարկային ռեզիստրների կողմից հավաքագրվող և տրամադրվող վարկային տեղեկատվության մակարդակի ու դրա շրջանակի և կազմի ընդլայնում (*ժամկետ 01.04.2009թ.*)
- Ակտիվների տեսակների շրջանակների ընդլայնում, որոնք կարող են օգտագործվել գրավադրման համար (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Գրավի բռնագանձման դատական ընթացակարգերի պարզեցում և դրանց ժամկետների կրճատում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Գրավադրված գույքի արտադատարանական բռնագանձման վրա (վեճերի բացակայության դեպքում) բոլոր տեսակի սահմանափակումների վերացում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Գրավադրված շարժական գույքի միասնական ռեզիստրի ստեղծում և հավաքագրվող տեղեկատվության՝ բանկերի և վարկային կազմակերպությունների համար հասանելիության ապահովում (*ժամկետ 01.07.2009թ.*):

6. Ներդրողների պաշտպանություն

Ներդրողների պաշտպանության ցուցանիշը ներկայացնում է ներդրողի պաշտպանվածություն երեք աստիճանները՝ գործառնությունների թափանցիկությունը

նշանակում են, որ ավելի շատ վարկային տեղեկատվություն է հասանելի պետական ռեզիստրի և մասնավոր բյուրոների միջոցով:

(Բացահայտման ցուցիչի աստիճանը), ինքնուրույն աշխատելու պատասխանատվությունը (Տնօրենի պատասխանատվության ցուցիչի աստիճանը), բաժնետերերի իրավունքը ոչ պատշաճ աշխատանքի համար դատական գործ հարուցելու պաշտոնյաների և ղեկավարների դեմ (Բաժնետերի հայց ներկայացնելու հեշտությունը) և Ներդրողի պաշտպանվածության ցուցիչի ամրությունը:⁴

Էստոնիայի և Վրաստանի հետ համեմատած Հայաստանի դասիչը ավելի բարձր է, սակայն մենք թերահուն ենք տնօրենի պարտավորությունների և թափանցիկության մեջ:

6.1 Հենանիշերը/թվային թիրախները

Այս ոլորտը բնութագրում է ընկերության ղեկավարության կողմից իրականացվող գործարքների վրա փոքր մաս կազմող ներդրողների/բաժնետերերի իրավական ազդեցության ունենալու իրավունքների մակարդակը: Հայաստանը գնահատվում է 2 միավորով տնօրենի պատասխանատվության և 5 միավորով՝ փոքր ներդրողների/բաժնետերերի իրավական պաշտպանության ու բացահայտման պահանջների ցուցիչով: Աշխարհում ներդրողների/փոքր բաժնետերերի պաշտպանության մակարդակով Հայաստանը զբաղեցնում է 83-րդ տեղը:

Ցուցանիշ	Հայաստան	Նոր Զելանդիա	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	83	1	33	33			12
Բացահայտման ցուցիչ	5	10	8	8	4.9	6.4	8
Տնօրենի պատասխանատվության ցուցիչ	2	9	4	6	3.8	5.1	6
Բաժնետերերի կողմից հարուցված դատական գործերի ցուցիչ	8	10	6	4	6.3	6.5	8
Ներդրողների իրավական պաշտպանվածության ցուցիչ	5	9.7	6	6	5	6	7

6.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրում (ժամկետ 01.07.2009թ.)
- Գործառնությունների բացահայտման պահանջների բարձրացում (ժամկետ 01.07.2009թ.)
- Տնօրեններին դեմ դատական գործ հարուցելու հնարավորությունների բարձրացում՝ կորպորատիվ ակտիվները ոչ նպատակային տնօրինելու համար (ժամկետ 01.07.2009թ.)
- Բաժնետերերի կողմից հսկողություն իրականացնելու նպատակով ընկերության փաստաթղթերի հասանելիության բարձրացում (ժամկետ 01.07.2009թ.)
- Պոտենցիալ շահերի բախում հանդիսացող գործարքների պարտադիր բացահայտման պայմանների բարձրացում (ժամկետ 01.07.2009թ.)
- Հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային ստանդարտների թարգմանություն և ընդունում (ժամկետ 01.01.2010թ.)
- Հաշվապահների և աուդիտորների որակավորման պահանջների համապատասխանեցում միջազգային չափանիշներին (Եվրամիության 8-րդ դիրեկտիվ) (ժամկետ 01.01.2009թ.):

⁴ Ցուցիչները տատանվում են 0-10 միջև, բարձր արժեքները արտահայտում են ավելի մեծ բացահայտման, տնօրենի պատասխանատվության, բաժնետերերի կողմից գործարքներ իրականացնելու ավելի մեծ իրավունքների և ներդրողների առավել պաշտպանություն աստիճան:

7. Հարկերի վճարում

Հարկերի վճարում ցուցանիչը ներկայացնում է այն հարկերը, որոնք պետք է վճարի միջին չափի ընկերությունը տվյալ տարում, ինչպես նաև վճարվող հարկերի վարչարարական բեռի չափերը: Այս չափերը ներառում են վճարումների քանակը, որ պետք է կատարի ձեռնարկատերը, նախապատրաստման, գրանցման և վճարման վրա վատնված ժամաքանակը, և իրենց շահույթի տոկոսային մասնաբաժինը, որը պետք է վճարվի որպես հարկ:

7.1 Հենանիշերը/թվային թիրախները

Հայաստանը աշխարհում դասակարգվում է 143-րդ տեղում հարկերի վճարման դյուրինությամբ, ինչը ամենավատն է Doing Business-ի ցուցանիշներից: Ներկայումս հայկական ընկերությունները յուրաքանչյուր տարի ծախսում են 1120 մարդ/ժամ (196 օր) հարկային հաշվետվությունները լրացնելու և պահանջները բավարարելու համար և կատարում են 50 տարբեր հարկային վճարումներ: Այս ցուցանիշը 5-րդն է աշխարհում ժամանակի երկարության առումով վատթարագույնների մեջ: Ավելացված արժեքի հարկի և սոցիալական ապահովագրության հատկացումների հաշիվների հաշվարկման և լրացման համար ծախսվում է ժամանակի մեծ մասը, յուրաքանչյուրի համար ամսեկան 40 ժամ: Շահութահարկը պահանջում է տարեկան ևս 13 վճարում և 160 մարդ/ժամ: Աշխարհի երկրների 1/4-ում հարկերի լրացումն և վճարումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Ըստ փորձագետների, այն երկրները, որտեղ ստուգումները հիմնված են ռիսկի վերլուծությունների վրա, ապահովում են ավելի մեծ հարկային հավաքագրումներ և հարկերի վճարման բարդության ներկայիս աստիճանը և հարկային վարչարարության ցածր որակը հանդիսանում են տնտեսության սովորաբար ստվերային բարձր և, հետևաբար, հարկահավաքման հնարավորից ավելի ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոններից մեկը:

Էստոնիան ունի ավելի բարձր միջին տոկոսադրույք/49%/ քան Հայաստանը /36%/, բայց առաջ է Հայաստանից՝ հարկերի վճարման դյուրինությամբ, ինչը նշանակում է, որ հարկային կառավարումը պետք է բարեփոխել: Էստոնիայում գործարարները ունեն տարեկան միայն 10 վճարում:

Ցուցանիշ	Հայաստան	Սինգապուր	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	143	2	31	102			80
Վճարումներ (քանակ)	50	5	10	29	46.3	15.1	29
Ծախսվող ժամանակ (ժամեր)	1120	49	81	387	451.5	183.3	300
Ընդհանուր հարկային դրույքաչափ (% շահույթի)	36.6	23.2	49.2	38.6	50.8	46.2	36.6

Հարկատեսակը	Հայաստան		Սինգապուր	
	Վճարումներ (քանակ)	Ծախսվող ժամանակ (ժամեր)	Վճարումներ (քանակ)	Ծախսվող ժամանակ (ժամեր)
Սոցիալական ապահովության վճարումներ	12	480	1	10

Կորպորատիվ շահութահարկ	13	160	1	30
Ավելացված արժեքի հարկ	12	480	1	9

7.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Հարկային վարչարարության պարզեցում և արդյունավետության բարձրացում, հատկապես ՓՄՁ-ի նկատմամբ (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Հարկերի ինքնահայտարարագրման համակարգի ներդրում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Հարկային հաշվետվությունների առցանց ներկայացման և հարկերի վճարման էլեկտրոնային համակարգի ներդրում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման/աուդիտի ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում և համատարած կիրարկում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Հարկերի վճարման հաճախականության, ներկայացվող հարկային հաշվետվությունների քանակի նվազեցում, որոշ հարկատեսակների միավորում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Հարկային համակարգում կորուսյալ երևույթների վերացում, էթիկայի և վարվելակերպի կանոնների ներդրում (*ժամկետ 01.01.2009թ.*)
- Հարկային բեռի հավասարաչափ բաշխում և հարկման բազայի ընդլայնում (*ժամկետ 01.01.2010թ.*)

8. Միջազգային առևտուր

Միջազգային առևտուր ցուցանիշը ներկայացնում է ապրանքների առաքման ստանդարտացված ընթացակարգերը և ծախսերը՝ կապված ներմուծման և արտահանման հետ: Այստեղ ներառված է ցանկացած պաշտոնական ընթացակարգ՝ սկսած երկու կողմերի միջև պայմանագրի կնքումից և ավարտված ապրանքների առաքմամբ:

8.1 Հենանիշերը/թվային թիրախները

Հայաստանում միջինը պահանջվում է 30 օր արտահանման համար և 24 օր ներմուծման համար, արժենալով համապատասխանաբար 1165 ԱՄՆ դոլար և 1335 ԱՄՆ դոլար: Արտահանման համար անհրաժեշտ է 7 փաստաթուղթ, ներմուծման համար՝ 8⁵: Միջազգային/արտաքին առևտրում 178 երկրների մեջ Հայաստանը զբաղեցնում է 118-րդ տեղը: Դա Հայաստանի երկրորդ վատթարագույն ցուցանիշն է Doing business-ի կողմից գնահատվող 10 ոլորտների մեջ: Հետազոտությունները պարզել են, որ արտահանվող ապրանքի յուրաքանչյուր օր հետաձգումը՝ խոչընդոտում և կրճատում է արտահանումը ավելի քան 1%-ով: Ժամանակի նկատմամբ զգայուն գյուղատնտեսական ապրանքների 10%-ով հետաձգումների կրճատելու արդյունքում՝ արտահանումը կաճի ավելի քան 30%-ով:

Ցուցանիշ	Հայաստան	Սինգապուր	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	118	1	7	64			21
Արտահանում, փաստաթղթերի քանակը	7	4	3	8	7	4.5	3
Արտահանման համար պահանջվող ժամանակը, օր	30	5	5	12	29.3	9.8	5
Արտահանման արժեքը (ԱՄՆ \$ մեկ կոնտեյների համար)	1165	416	675	1105	1393	905	1165

⁵ Արտահանման և ներմուծման փաստաթղթերի հաշվարկված քանակի մեջ, ըստ մեթոդաբանության, մտցված են 2-ական փաստաթուղթ, որոնք Վրաստանի մաքսավորները պահանջում են վրացական նավահանգստում, այսինքն՝ Հայաստանյան մաքսավորների կողմից արտահանման և ներմուծման համար պահանջվող փաստաթղթերը իրականում համապատասխանաբար 5 և 6 են:

Ներմուծում, փաստաթղթերի քանակը	8	4	4	7	8.3	5	3
Ներմուծման համար պահանջվող ժամանակը, օր	24	3	5	14	30.8	10.4	5
Ներմուծման արժեքը (ԱՄՆ \$ մեկ կոնտեյնրի համար)	1335	367	675	1105	1551	986	1335

Արտահանման ընթացակարգերը

Ծախսը ԱՄՆ դոլարով է	Հայաստան		Էստոնիա	
	Օր	Ծախս	Օր	Ծախս
Փաստաթղթերի պատրաստում	17	30	1	200
Դեպի երկիր փոխադրումներ և գործողություններ	10	850	1	300
Մաքսային ստուգում և տեխնիկական հսկողություն	1	35	1	25
Փախադրում տերմինալ և պահեստ	2	250	2	150

Ներմուծման ընթացակարգերը

Ծախսը ԱՄՆ դոլարով է	Հայաստան		Էստոնիա	
	Օր	Ծախս	Օր	Ծախս
Փաստաթղթերի պատրաստում	13	115	1	200
Դեպի երկիր փոխադրումներ և գործողություններ	5	950	1	300
Մաքսային ստուգում և տեխնիկական հսկողություն	3	20	1	25
Փախադրում տերմինալ և պահեստ	3	250	2	150

8.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Ռիսկի կառավարման համակարգի ընդլայնում և արդյունավետության բարձրացում՝ հիմնված ԱՏԳ սուբյեկտների գործունեության պատմության վրա (ժամկետ 01.01.2009թ.)
- Հետմաքսագերծման աուդիտի ընդլայնում և արդյունավետության բարձրացում (ժամկետ 01.01.2009թ.)
- Տեղեկատվության առցանց ներկայացման հնարավորության ընդլայնում և դրա ներքին փոխանակման էլեկտրոնային համակարգի արդյունավետության բարձրացում (ժամկետ 01.01.2009թ.)
- Արտահանման և ներմուծման գործարքների մաքսային հսկողության ժամկետների կտրուկ կրճատում (ժամկետ 01.01.2009թ.)
- Մաքսային հսկողության համար պահանջվող փաստաթղթերի քանակի կրճատում (ժամկետ 01.01.2009թ.)
- Այրանքների գնահատման մեթոդաբանության և մոտեցումների թափանցիկության բարձրացում (ժամկետ 01.01.2009թ.)
- Մաքսային համակարգում կորույսից երևույթների վերացում, էփիկայի և վարվելակերպի կանոնների ներդրում (ժամկետ 01.01.2009թ.):

9. Պայմանագրերի կիրարկումը

Պայմանագրերի կիրարկումը ցուցանիշը ներկայացնում է առևտրային պայմանագրերի կիրարկման դյուրինությունը կամ բարդությունը: Դա որոշվում է վճարման հետ կապված վեճերի ընթացքով, ներառելով, հայցվորի կողմից հայցի ներկայացման պահից մինչև փաստացի վճարումը վատնած ժամանակը, կատարված ծախսերը ու ընթացակարգերի քանակը:

9.1 Հենանհիշերը/թվային թիրախները

Միջինում, Հայաստանում առևտրային/կոմերցիոն վեճը կարգավորելու համար պահանջվում է իրականացնել 50 ընթացակարգ, որը տևում է 285 օր և ծախսը կազմում է հայցի արժեքի 19%-ը: Աշխարհում Հայաստանը զբաղեցնում է 64-րդ տեղը պայմանագրերի կիրարկման դյուրինության առումով: Նախնական հայցի լրացման և պատասխանողին ծանուցման ընթացակարգի իրականացումը տևում է միջինում 40 օր, որը աշխարհում 100-րդ տեղն է զբաղեցնում տևողության երկարությամբ:

Էստոնիան և Վրաստանը ունեն 36 ընթացակարգ:

Ցուցանիշ	Հայաստան	Հոնկոնգ	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	64	1	29	42			24
Ընթացակարգեր (քանակ)	50	24	36	36	35.9	31.3	36
Տևողություն (օրեր)	285	211	425	285	443	443.3	285
Ծախս (% պահանջվող գումարի)*	19.0	14.5	17.3	29.9	22.7	17.7	19.0

* Ենթադրվում է, որ պահանջվող գումարը պետք է հավասար լինի մեկ շնչին ընկնող եկամտի 200%-ին:

9.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Դատական գործընթացի և դատավճռի կիրարկման ընթացակարգերի կրճատում (ժամկետ 01.07.2009թ.)
- Դատավարական ժամկետների վերանայում, դատաքննության ընդհանուր ժամկետի կրճատում (ժամկետ 01.01.2009թ.)
- Հայցը վարույթ վերցնելու և քննություն սկսելու հստակ ժամկետի սահմանում (ժամկետ 01.01.2009թ.)
- Դատավարական ժամկետների մոնիտորինգի իրականացում և հրապարակում (ժամկետ 01.07.2009թ.)
- Դատարաններում հայցի լրացման և պատասխանողին ծանուցում ուղարկելու ընթացակարգերի ժամկետների հստակեցում (ժամկետ 01.01.2009թ.)
- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող այլընտրանքային մասնավոր ծառայությունների ստեղծում (ժամկետ 01.01.2010թ.)
- Միջնորդ դատավարության ինստիտուտի կայացում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան (ժամկետ 01.07.2009թ.):

10. Կազմակերպության լուծարում

Կազմակերպության լուծարման ցուցանիշը ներկայացնում է գործընթացի հետ կապված ժամանակը և ծախսերը: Տվյալները բացահայտում են գործող լուծարման/աննանկության օրենքի թերությունները և հիմնական դատավարական և վարչարարական խոչընդոտները լուծարման գործընթացում: Ներկայացվում է նաև վերականգնման/փոխհատուցման դրույքաչափը, այն հաշվարկով թե մեկ դոլարից քանի ցենտն է վերականգնվում/փոխհատուցվում անվճարունակ ընկերությունից գումարի դոլարային պահանջի դեպքում:

10.1 Հենանիշերը/թվային թիրախները

Հայաստանում կազմակերպության լուծարման/սնանկացման գործընթացով անցկացնելը միջինում տևում է 1.9 տարի և ծախսը կազմում է գույքի արժեքի 4%-ը:

Ցուցանիշ	Հայաստան	Ճապոնիա	Էստոնիա	Վրաստան	Տարածաշրջան	ՏՀԶԿ (OECD)	Հայաստան 2010
2008թ. վարկանիշը	42	1	50	105			42
Տևողությունը (տարի)	1.9	0.6	3	3.3	3.2	1.3	1.6
Ծախսը (% սեփականության)	4	4	9	4	13.7	7.5	3
Վերականգնման/փոխհատուցման դրույքաչափը (ցենտ 1 դոլարից)	42.0	92.6	39	22.8	28.9	74.1	42

10.2 Մարտավարությունը և ժամանակացույցը

- Լուծարման ժամկետների և ընթացակարգերի կրճատում ու պարզեցում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Վարկատուների իրավունքների բարձրացում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Լուծարման ընթացակարգերի ծախսերի կրճատում (*ժամկետ 01.07.2009թ.*)
- Լուծարարին կառավարիչների որակավորման և պատասխանատվության բարձրացում (*ժամկետ 01.07.2009թ.*):

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանի երկրների նկատմամբ ունի մի շարք համեմատական առավելություններ, որոնք լրացուցիչ ազդակ են Հայաստանը գործարարության և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն դարձնելու համար: Հետևյալ հարաբերական առավելություններն են, որ առաջիկա տարիներին կխթանեն Հայաստան մտնող օտարերկրյա ներդրումները և համաշխարհային շուկաների համեմատությամբ կձևավորեն մրցունակ տնտեսություն.

- կոռուպցիոն երևույթների վերացում
- պարզ մաքսային սակագնային քաղաքականություն
- կապիտալի ազատ շրջանառման հնարավորություն և օտարերկրացիների կողմից Հայաստանում 100 տոկոսով սեփականության տիրապետման իրավունք
- առևտրային կարևորագույն կապող հանգույց դառնալու հնարավորություն Իսլամական երկրների, Ռուսաստանի և արևմուտքի միջև՝ ի հաշիվ Հայաստանի աշխարհագրական դիրքի, ձեռնարկատիրության հեշտացմանն ուղղված լայնածավալ բարեփոխումների և արդեն ավանդույթ դարձող հայ ձեռնարկատիրական մշակույթի, հոգեբանության ու հակումների
- ԱՀԿ-ին անդամակցությունը և ազատ առևտրի համաձայնագրեր Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հետ
- ԵՄ-ի հետ խորը ազատ առևտրի համաձայնագրի կնքման հնարավորություն
- սփյուռքահայ գործարարների և նրանց ունեցած գործարար կապերի միջոցով լայնածավալ ներդրումների ներհոսքի խթանում Հայաստանյան շուկա:

ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Doing Business-ի հենանիշերով հաջողությունների արձանագրման և ընդհանրապես գործարար միջավայրի բարելավման արդյունքները տնտեսության ճյուղերի զարգացման վրա նկատելի դարձնելու համար, անհրաժեշտ է ապահովել օրենսդրական դաշտի լիարժեք կիրարկում, արդյունավետ աշխատող ինստիտուցիոնալ կառույցներ և պետական կառավարման համակարգ և գործարար համայնքի ու տնտեսության զարգացման որոշակի աստիճան: Ռիսկային գործոն է հանդիսանում նաև այն, որ վարչարարության պարզեցման և ազատական կարգավորումների ընդլայնման արդյունքում հնարավոր է գործարար համայնքի որոշակի հատվածի կողմից չարաշահումների հնարավորություն: Այդպիսի ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով և սպառողների շահերի պաշտպանության ժամանակակից համակարգեր ներդնելու նպատակով՝ պետք է անցում կատարվի Եվրոպական ստանդարտների ուղղակի կիրառմանը Հայաստանում, որակի համապատասխանության հսկողության համակարգերը պետք է ստուգողական բնույթից անցնեն որակի իրական չափանիշների և դրա զարգացման ապահովման ծառայությունների մատուցմանը: Պետք է նաև զուգահեռաբար ընդլայնվեն հետմաքսային և ռիսկի վրա հիմնված հարկային աուդիտները և բարձրացվի դրանց արդյունավետությունը:

Նախագծի ռիսկեր կարող են հանդիսանալ.

- Պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև դոնորների կողմից ոչ բավարար ֆինանսական միջոցների հատկացումը
- Զաղաքականության ոչ համակարգված իրականացումը՝ չհամաձայնեցված և անհամադրելի միջոցառումների զուգահեռաբար իրականացումը

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Նախագիծը իրականացնողները

- ՀՀ կառավարություն
- Համաշխարհային բանկ
- Միջազգային ֆինանսական կորպորացիա
- Doing Business ծրագրի փորձագետներ
- Պետություն-մասնավոր համագործակցություն
- Ոլորտում գործող հասարակական կազմակերպություններ

Հարակից մասնակիցները

- Ստանդարտ ծախսերի մոդել ծրագրի փորձագետներ
- Սփյուռքից ներկայացուցիչներ, փորձագետներ

Միջուռքի ներկայացուցիչների մասնակցությունը հատկապես կարևորվում է նրանց փորձագիտական գիտելիքների և տնօրինվող տեղեկատվության փոխանցման տեսանկյունից

Նախագծի սպառողները

- Գործարար համայնք
- Հասարակություն

ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի արդյունքները չափելու համար ընտրվել է ՀԲ-ի և ՄՖԿ-ի կողմից համատեղ հրապարակվող Doing Business դասակարգումը, քանի որ այն չի պահանջում ռեսուրսների հատկացում և մեթոդաբանության մշակում, իրականացվում է Doing Business-ի կողմից և իրենց հաշվին, ինչպես նաև հնարավորություն է տալիս համեմատել գործարար միջավայրի զարգացման աստիճանը նույն մեթոդաբանությամբ 178 երկրների հետ:

Բացի «Գործարարությամբ զբաղվելը» ամենամյա դասակարգումից և Հայաստանին վերաբերող հաշվետվությունից, մոնիտորինգի իրականացման համար կօգտագործվի Համաշխարհային Բանկի և Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից համատեղ անցկացվող «Կարգավորիչ և վարչական ծախսեր» ամենամյա Հետազոտությունը, որը նույնպես հնարավորություն կտա մոնիտորինգի ենթարկել նախատեսված բարեփոխումների իրականացման առաջընթացը:

Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված բարեփոխումների ընթացքի թափանցիկությունն ապահովելու նպատակով պարբերաբար համապատասխան տեղեկատվությունը կգետեղվի պետական մարմինների պաշտոնական կայքէջերում, գործարար համայնքի և այլ շահագրգիռ կողմերի հետ կկազմակերպվեն կլոր սեղաններ, քննարկումներ, ինչպես նաև տեղեկատվությունը կմատուցվի ՋԼՄ-ի միջոցով:

ԾԱԽՍ/ԵԿԱՍՈՒՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն միջազգային համադրումների «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման 10 ցուցանիշներից յուրաքանչյուրի գծով իրականացվելիք բարեփոխումների գինը տատանվում է 1-ից 2 մլն. ԱՄՆ դոլարի սահմաններում: Փորձը ցույց է տալիս նաև, որ թե միջազգային դոնորները և թե մասնավոր հատվածը պատրաստ են կիսել ծախսերի ավելի քան 60-70%-ը: Միաժամանակ նույն միջազգային համադրումները ցույց են տալիս, որ վարչարարական խոչընդոտների վերացման, գործընթացների պարզեցման և թափանցիկության բարձրացման հետևանքով օգուտները զգալիորեն գերազանցում են իրականացված ծախսերը.

Երկիրը	Ընթացակարգեր	Գործարարների կողմից խնայված միջոցներ
Ադրբեջան	Գրանցման ընթացակարգերի պարզեցում	5, 788, 765 \$
Բելառուսիա	Գրանցման ընթացակարգերի պարզեցում	15, 352, 107 \$
Տաջիկստան	Ստուգումների ընթացակարգերի պարզեցում	8, 463, 462 \$
Ուկրաինա	Ստուգումների ընթացակարգերի պարզեցում	211, 912, 413 \$
Ուզբեկստան	Գրանցման ընթացակարգերի պարզեցում	13, 953, 338 \$
	Թույլատվությունների և լիցենզիաների ստացման ընթացակարգերի պարզեցում	10, 191, 132 \$
	Հարկային հաշվետվությունների պարզեցում	4, 570, 699 \$
	Ստուգումների ընթացակարգերի պարզեցում	16, 303, 879 \$
	Ընդամենը Ուզբեկստանում	45, 019, 049 \$

Այսպիսով, եթե հաշվի առնենք նաև երկրի գործարար միջավայրի գրավչության բարձրացման հետևանքով ակնկալվող ներդրումների աճը, գործարար ակտիվության բարձրացումը, պետության կողմից խնայված ռեսուրսները և այլն, ապա սույն հայեցակարգով ներկայացվող դրույթների իրականացումը բարեփոխումների այս փուլում չափազանց կարևոր է:

ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2008-2012թթ.